ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2017 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 138 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 138 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերությունում «մինչև 0,05 լիտր տարողությամբ կոնյակի և (կամ) գինու արտադրանքը» բառերը փոխարինել «ԱՏԳ ապրանքային անվանացանկի 2204, 2205, 2206 կամ 2208 ծածկագրերին դասվող՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ տարաներով տարայավորված ոգելից խմիչքները» բառերով.

2) որոշման 1-ին կետի «ա» ենթակետի երրորդ պարբերությունում և 2-րդ կետի «բ» ենթակետում «մինչև 0.05 լիտր տարողությամբ տարաներով իրացվող կոնյակի և գինիների» բառերը փոխարինել «ԱՏԳ ապրանքային անվանացանկի 2204, 2205, 2206 կամ 2208 ծածկագրերին դասվող՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ տարաներով տարայավորված իրացվող ոգելից խմիչքների» բառերով.

3) որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ[9]» և «զ[10]» ենթակետերով.

«զ[9]) 2018 թվականի հունվարի 1-ից Արցախի Հանրապետությունում արգելվում է Արցախի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.

զ[10]) 2018 թվականի հուլիսի 1-ից Արցախի Հանրապետությունում արգելվում է Արցախի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.».

4) որոշման 3-5-րդ և 8-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով.

5) որոշման 5-րդ կետի «ե» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով.

6) որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված կարգի՝

ա. վերնագրում «ԼՂՀ-ում» բառը փոխարինել «Արցախի Հանրապետությունում» բառերով,

բ. 7-րդ կետում «հարկային մարմնից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմնից (այսուհետ՝ հարկային մարմին)» բառերով,

գ. 11-րդ կետի «գ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «հարկային մարմնի» բառերով,

դ. 15-րդ, 16-րդ և 26-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «հարկային մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով,

ե. N N 4 և 5 հավելվածներում «ԼՂՀ ՀՊՎ _____
(հարկային մարմնի անվանումը)
հարկային մարմնի պետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմի ղեկավարին» բառերով,

զ. N 5 հավելվածում «ԼՂՀ ՀՊՎ Շ(Ք) ՀՏ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով.

7) որոշման վերնագրում, հիմքում, 1-ին կետում, 2-րդ կետի «ա», «բ», «դ» ենթակետերում, «է» ենթակետի երկրորդ պարբերությունում, 4-րդ կետի առաջին նախադասությունում, 5-րդ կետի «ե» ենթակետում, որոշման 1-ին կետի «ա», «բ» ենթակետերով հաստատված ցանկերի վերնագրերում, որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված կարգի 1-ին, 9-րդ, 10-րդ, 14-րդ կետերում, 21-րդ կետի «ա» ենթակետում և 27-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**